ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 945 - Ա

«ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՓԱՄԲԱԿ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՅԻ ԵՎ ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 49,080,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ֆիոլետովո համայնքի և Փամբակ խոշորացված համայնքի Մարգահովիտ բնակավայրի համար աղբատար մեքենայի և աղբամանների տրամադրում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված ներքոհիշյալ բեռները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) ISUZU մակնիշի աղբատար ավտոմեքենա (39,000,000 դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչություն).

2) 95 հատ կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներներ (9,500,000 դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչություն):

3. Սահմանել, որ «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 06951543) «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01569408) 2023 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված թիվ Ա-03/24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 580,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն:

4. «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

28.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ